

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏՎԱԲՐ ՀԵԶՈՒՆ

Ա. ՄԱՍՆ

ԳՐԵՑ

Հ. ԵՓՐԵՄ ՊՈՂՈՍԵԱՆ

ՄԱՆԻՉ, ԱՌԱՋԱ



ԳՐԱՎԴՐԻ 1935

Առ. «ՀԱՅ ԱՐԴ» ՊՐԱՎՈՒՆ ԽԱՐԴԻ ԽԵՎԱՆԱԳ ՁԵՐ

99-5 ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

79

ԱՇԽԱՏԱՀԱՅԱՐ ԼԵԶՈՒՐ

Ա. ՄԱՍՆ

Ապրիլի 5 1981 թ.

ԳՐԵՑ

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

Մատենադարան, Առևտություն

—————

ԳԼՈՎԴԻԻ 1935



Յպ. «ՆՈՐ ՏԱՐ» Պլավդիւ

A  $\frac{\pi}{13103}$



Հայերէն լեզուի ուսուցումը լառ. հիմերու վրայ դնելու և հայ տղան փոքր հասակէն ուղիղ ու անօխալ հայերէն խօսելու և գրելու վարժեցնելու համար, անհրաժեշտ է որ հայերէն քերականութեան տարերքը շատ կանուխէն սկսին աւանդուիլ մեր ազգային վարժարաններու մէջ: Երբ աշակերտը հայերէն վարժ կարգալ սորված է կարող է արդէն իր լեզուին քերականական կանոններուն տարրական գիտելիքներն ալ կամաց կամաց իւրացնել, պայմանով որ անոնք — քերականական կանոնները — տղոց մտքին պատշաճեցուին ու գիւրուսոյց կերպով աւանդուին: Հայերէն աչխարհաբար ներականութեան Ա. Մասր, զոր լոյս կ'ընծայենք, յատկապէս պատրաստած ենք նախակրթարանի վերջին կարգերու աշակերտներու համար, ջանալով կարելի եղածին չափ պարզ ու գիւրըմբոնելի ընել քերականական կանոնները տղոց մտքերուն: Խուսափելով քերականական ամէն տեսակ բարդ խնդիրներէ ու մանրամասնութիւններէ՝ ընտրած ենք այս Ա. Հատորիկին համար ամէնէն նախնական ու գիւրիմաց կանոնները, յաջորդ հատորներու վերապահելով աստիճանական յառաջդիմութիւն ու լրացում մը հայերէն ամբողջական քերականութեան: Գրաւոր ու բերանացի հրահանգները, զոր կցած ենք քերականութեան կանոններուն՝ հայելի օրինակով բացատրելու և լաւագոյն կերպով ըմբռնելու պիտի ծառայեն

**Քերտականական կանոնները:**

Ի բրեւ արդի աշխարհաբարի քերտականութեան անժիմանելի հեղինակութիւն՝ այս գործիս մէջ մեզի առաջնորդ ունեցած ենք մասնաւորապէս Ն. Արսէն Այսընեան՝ միշտ նկատի ունենալով նաեւ լեզուին զարգացումն ու ներկայ ժամանակին պահանջքը:

**Պլովդիւ**

15 Օգոստոս 1935

**ՀԵՂԻՆԱԿԻԸ**



ԱՇԽԱՐՀԱԿԱՐ ԼԵԶՈՒԻ

U. S. GOV'T

## Ա. Դաս.— Հայերէն Քերաբանութիւն

1. Հայերէն Քերականութիւնը՝ հայերէն  
լեզուն ուղիղ հասկնալ և անսխալ խօսիլ կամ  
գրել կը սորվեցնէ:

## Ա. ՀԵՐԵԳՈՒԹՅՈՒՆ

Ո՞րքան սիրուն է հայերէն լեզուն։ Գտշաւընչիւն ու դիւրասահ է ան։ Իր քերտկանութիւնը պայծառ, կանոնները սրոշ են։ Կը սիրեմ ես հայերէն լեզուն։ Մայրենի լեզուն է ան։ Անով խօսե ու առաջին անգամ զբան են Ս. Ստանի ու Ս. Մեսապ։ Հայերէնը ամենահին լեզուներէն մէկն է։ Սիրով ու եռանդով պիտի սորվիմ մայրենի լեզուն՝ հայերէնը։

ՀՐԱՀԱՆՔ

1. Περιγραφή της απόδοσης της πληθυσμού στην περιοχή της Αρκαδίας.

— 1 —

## Բ. Դաս.— Գիր

2. Հայերէն լեզուն երեսունութը զիր ունի,  
որոնք են. ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ  
ն ձ դ ն մ յ ն շ ո չ պ ջ ո ս վ տ ց ւ փ ի  
օ ժ:

3. Գիրը երկու տեսակ է ձայնաւոր եւ բաղաձայն:

4. Ձայնաւոր գեեցը ութը հատ են. ա և է ը ի ո ւ օ:

5. **Մէկալ երեսուն դրերը** բաղաձայն կ'ըս-  
տին:

**Բ. Ընթերցուած.** — Գրեցու Գիրը

Հին ժամանակ հայերը զիր չունէին, Դպրոցներու մէջ յունարէն ու ասորերէն զրերը կը գործածէին: Հայերէն զիր չըլլալուն՝ շատ նեղութիւն կը կրէին չին հայերը: Ա: Սահակ հայրապետան ու Ա. Մեսրոպ վարդապետը տոաջիններն եղան որ ճատեցին հայերէն զիրը՝ հայերէն զրերը զտան՝ Քրիստոսի ծնունդէն յետոյ հինգերորդ դարուն սկիզբը: Ի՞նչ մեծ բարիք է սեպհական զիր ունենալը:

### ՀՐԱՀԱՆԴՆԵՐ

2. **Օրինակեցի այս ընթերցուածը:**

3. **Բերանացի ըսկի քէ ընթերցուածին բառ-**  
րուն մէջ ո՞ր գրերը ձայնաւոր եւ ո՞ր գրերը բա-  
ղաձայն են:



**Գ. Դաս.** — Վանկ

6. Երբ մէկ կամ մէկէ աւելի դրեր մէկ հնչումով արտասանուին՝ Վանկ մը կը կտզմեն: Օրինակ. ափ, գիր, տող, տօն, նաց:

7. Առանց ձայնաւոր դրի վանկ շի կազմուիր:

**Գ. Ընթերցուած.** — Կատօւն

Մետաքսի պէս փափռակ են իր ճազերը: Աշ-

բերը փայլուն ու արթուն. Պոչը երկայն ու շարժուն, Մաքրասէր կենդանի մըն է կտառւն. Ամէն կերակուրէ վերջ՝ բերանն ու շրթունքները կը որբէ իր թաթիկներովը. Երախտագէտ է զինքը կերակրողներուն ու բարեկամ՝ զինքը սիրողներուն հանգէպ. Կատառն տան մէջ օգտակար է. մաւկերը կը չնշէ:

### ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

4. Օրինակեցէք այս ընթերցուածը և գծեցէք մեկ վանկ ունեցող բառերուն տակը:

5. Բերանացի ըստ մեկ, երկու, երեք և շատ վանկ ունեցող բառեր:



Դ. Դամ— Բառ եւ խօսք

8. Բառը մէկ կամ մէկէ աւելի վանկէ կազմուած է և զաղափար մը կամ նեանակարին մը կը յայտնէ: Օրինակ. բալ, կարաս, խառաւիկ, յաղթանակել:

9. Խօսմը բառերու միացումն է և իմաստ մը կը յայտնէ: Օրինակ. Ես նամակ կը գրեմ. բռչունը վանդակէն փախաւ:

Դ. Ընթերցուած. — Թիթեռնիկը

Ո՞ր աղան չի սիրեր սիրուն աղուոր թիթեռնիկը՝ սոկի, խտառուտիկ թեւերով: Հավի պէս արագ, փետուրի պէս թեթեւ՝ ծաղկէ ծաղիկ կը թռչի, անոյշ էիւթեր կը ծծէ. Երեկ որդ մէր անարգ, այսօր թագուհի մը պճնազարդ, Բնութեան ազատ զաւակն է ան, ուրախ ու զուարթ:

### ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

6. Օրինակեցէք վերի ընթերցուածը բառերը զիծով մը իրաւուկ զանդով: Օրինակ. Ո՞ր — Տղան

— չի — սիրեր — աղսւսր — թիթեռնիկը —:  
7. Բառեր միացնելով՝ խօսի կազմեցեմ բերա-  
նացի:



### Ե. Դաս. — Առօգանաւթիւն

10. Առօգանաւթիւնը արուեստ մըն է, որ  
բառերը ուղիղ արտասանել կը սորվեցնէ:

11. Առօգանաւթեան նշաններն են, ուստի (')  
երկար ('), պարզյկ ("), որոնք միայն ձայնա-  
ւոր դրերու վրայ կը դրուին:

12. Նետ կը դրուի ա'յն վանկին վրայ,  
զոր բարձր կամ սուր կ'արտասանենք: Օրինակ.  
Կետրո՞ս, եկո՞ւր:

### ՀՐԱՀԱՆԴ

8. Օրինակեցեմ նետեալ խօսերը եւ շեշտերը  
դրեմ, ուր որ պետք է:

Արշակ, գտադ սորվէ: Տղաս, փողոցները մի  
խաղարի նըրեք սուտ մի խօսիր: Վարդուհի, զնա-  
տուն: Արմինէ, հաս եկուր: Բաւական է խաղալը:  
Տղաք, առւն զացէք: Առ և կարդա սա զրգերը: Յա-  
ռաջ շարժեցէք: Քայլ առաջ, օն:

Օրինակ. Տղա՛ք, տո՞ւն զացէք:



### 9. Դաս. — Առօգանաւթիւն — երկար

13. Երկար նշանը կը դրուի ա'յն վանկին  
վրայ, որ երկար կ'արտասանուի: Օրինակ. Ար-  
եան գեղեցիկ է. Միանչելի՛ նկար:

### ՀՐԱՀԱՆԴ

9. Օրինակեցեմ վարի խօսերը եւ երկար նշանը

ունեցող բառերուն տակ զիծ յաշեցէք:

Ո՞չ, ի՞նչ անոյշ և ի՞նչպէս զով օլ է: Երանի՛  
թէ զար այսօր. ի՞նչե՛ր պիտի տեսնէր: Ի՞նչ ուժեղ  
մարդ է. ձեռքով հասա երկաթներ կը ծռէ. Ո՞րքան  
ծանր կը կշռէ առ ըեռը. Զարմանալի՛ բան. փոքր  
զորեկը մըն է, սակայն՝ տեսէ՛ք, ի՞նչպիսի՛ կարե-  
ւոր զարծեր կ'ընէ: Աւա՛զ արդէն փնտցած է: Մե՛զք:



Է. Դաս.- Առօգանութիւն — պարոյկ

14. Պարօյկ, որ հարցումի նշան ըսել է կը  
դրուի հարցում եղած բառին՝ շեշտուած վան-  
կին վրայ: Այսպէս. Խնչու եկար. Ավկը զրեց. Խըն-  
ձո՞ւ կ'ուզիս թէ տանձ:

### ՀՐԱՀԱՆԴ

10. Օրինակեցէք հետեւեալ խօսքերը եւ պարոյկ  
դրէք պահանջուած տեղերը:

Ի՞նչպէս կը սորվիս դասդէ: Ով օգնեց քեզի: Որ-  
մէ վախցար. Սյս զիշեր քննցար: Քանի հազի էիք:   
Երբ մեր տունը պիտի դաս. Ուսկից գնեցիք այդ  
սիրուն զիրքը: Պառյաբ կ'երթաս թէ այցելութեան:  
Ի՞նչու կու լաս: Կարպիսը կը փնտռես թէ օննիկը:

Օրինակ. Ի՞նչպէս կը սորվիս դասդէ:



Ը. Դաս.— Ե ձայնաւորը

15. Ե ձայնաւորը՝ երկու բազաձայներու  
մէջտեղ՝ է-ի պէս կէ հնչուիք: Օրինակ. Սեղան,  
վերջին, թիթեանիկ:

16. Ե ձայնաւորը՝ բառերուն սկիզբը իր  
բնական հնչումը (իէ կամ յէ) կը պահէ: Օրի-  
նակ. Երկու, Երկինք, Երբ:

## ՀՐԱՀԱՆԴ

11. Օրինակեցկի վարի խօսքերը եւ զիծ յաշեցկի ա'յն բառերուն տակ, որոնց մէջ Ե զիրը՝ Ե կը հնչուի:

Վերաբկուդ կաճկէ՛, աղա՛ս: Ա. Մեսրոպ գտաւհայ զրերը: Վերջինը՝ տուշին պիտի ըլլայ: Ո՞ր սեղանին կ'ըսենք եռուանի: Աեր տեղը նեղ է: Ատիկա վերի տրտի ցորեն է: Ի՞նչ զեղեցիկ նկարներ կը ցուցադրէք: Կրնա՞ք ըսել թէ ի՞նչ արժեց ինձի ոյս զորելը:

Օրինակ. Վերարկուդ կոճկի՛, տղա՛ս:

12. Գտէ՛ բառեր, որոնց մէջ Ե ձայնաւորը իր բնական հնչումը կը պահի:



**Թ. Դաս. — Ո ձայնաւորը**

17. Ո ձայնաւորը՝ միայն բառերուն սկիզբ իր յատուկ հնչումը (ՈՒՈ կամ Վ.Ո) կը պահէ: Այսպէս. Որդ, Ուկի, Որկոր:

18. Ո ձայնաւորը՝ բառերուն մէջ Ո կը կարդացուի: Օրինակ. Գոց, Փաղոց:

**Ե. Ընթերցուած. — Ուր Տղան**

Ոտքերը բապիկ, զգեստները պատռած՝ տան մը տնկիւնը կեցած էր որբ աղան: Ո՞չ հայր ունէր, ա'չ ալ մայր: Տիսուր արտօւմ կը նայէր անցնողներուն: Խեղճ որբուկն անօթի էր: Բարի տիկին մը, որ անկէ կ'անցնէր՝ ողորմեցաւ թշուառ որբին: Իր տաւնը տարաւ զայն, կերակուր ու հազուսաւ տաւաւ և իր որդեղիքն ըրաւ:

## ՀՐԱՀԱՆԴՆԵՐ

13. Օրինակեցկի վերի ընթերցուածը եւ առ-

րազմեցեց ա'յն բառերը, որոնց մէջ Ո զիւրը իւ յա-  
տուկ հնչումը (Վ.Բ) կը պահի:

14. Թերանացի օրինակներ զշկի այնպիսի բա-  
ռերու որոնց մէջ Ո ձայնաւորը Օ կը հնչուի:



Ժ. Դաս.— Ու-ի ննչումը

19. Երբ Ու բառի մը մէջ՝ ձայնաւոր գրէ  
մը առաջ ըլլայ՝ Վ.-ի նման կը հնչուի: Օրինակ.  
Նուարդ (կարդա՛ նվարդ), զաւարք (կարդա՛  
զվարք), պատօւէր (կարդա՛ պատվէր):

Զ. Ընթերցուած.— Մօակը

Աժառուան տաք օրերաւն, երբ ամէն մարդ  
շուք ու զովութիւն կը փնտոէ, մշակը՝ ձեռքը մա-  
ճին՝ արաք կը հերկէ: Արեւը կ'այրէ, քրտինքը  
կայլակ կայլակ կը հսոի իր ճակտէն վար: Ի՞նչ  
փոյթ, Զուարթ ձայնը ձզած՝ ան հսոսվել կ'երդէ և  
արախն մէկ ծայրէն միւսը կ'երթեւեկէ: Օրէնսուա՛ծ  
է մշակին աշխատանքը, պաղաքե՛ր են անօր քրախն-  
քի աղնուական կաթիւները: Զէ՝ որ մէկին դէմ  
տաք պիտի հնձուի յետոյ:

### ՀՐԱՀԱՆԴ

15. Օրինակեցկի այս ընթերցուածը եւ ընդգծե-  
ցի ա'յն բառերը, որոնց մէջ Ու Վ. կը հնչուի:



ԺԱ. Դաս.— Յ Գիրը

20. Յ գիրը՝ բառերուն սկիզբը կակուլ Հ.-ի  
մը պէս կը հնչուի: Օրինակ. Յեսան, Յակոբ,  
Յարմար:

21. Յ գիրը՝ մէկ վանկէ աւելի բառերուն

զերջը շի կարգացուիր։ Այսպէս. Մառայ, Հաւաքածոյ։

22. Յ գերը՝ քանի մը մէկ վանկ ունեցող բառերու մէջը կէս Խ-ի պէս կը հնչուի։ Օրինակ. Հայ, Խոյ. Խոկ քանի մը միավանկներու վերջն ալ շի կարգացուիր։ Օրինակ. Կայ, Լայ. Տայ։

Է. Ընթերցօւած։— Խելօֆ Տղան

Յովհաննէս խելօք աղայ մըն է, կը յարգէ իր ծնողքն ու ուսուցիչները և անոնց կը հնազանդի. Դպրոցի մէջ աշխատատէր ու յառաջադէմ է. Գըրքերն ու տեարակները մտքուր են. Հող կը տանի նաև իր զգեստներուն, սրսոնց վրայ բիծ մ'անդամ չկայ. Բոլոր ընկերներուն կը յարմարի Յովհաննէս և ամէնքը զինքը կը սիրեն, Յուսուլից տպագայ մ'ունի Յովհաննէս։

### ՀՐԱՀԱՆԴՆԵՐ

16. Օրինակեցկի վերի ընթերցօւածը եւ զծեցկի այն բառերուն տակ, որոնց սկիզբի Յ-ն Հ կը կարդացուի։

17. Մկյանկ բառ զտկի, որոնց վերջի Յ զիրը չի կարդացուիր։



ԺԲ. Դաս։— Տօղադարձ

23. Տօղադարձ կ'ըսուի՝ բառի մը. մէկ մասը՝ մէկ տողէն միւսը անցնելուն։

24. Տօղադարձի ընդհանուր կանոնն է՝ բառերը վանկ վանկ զատել։ Օրինակ. Տես-նել, ա-լիմ, զեղ-զե-դել։

25. Երբ բառի մը մէջ բաղաձայն գրերու մէջտեղ լ կը հնչուի՝ տողադարձի ժամանակ այդ լ. և կը դրուի: Օրինակ. Մկրտչ Արկ-րատ, Տրմնջել՝ Ծըրբ-մըն-ջել:

26. Տողադարձ ընելու ատեն՝ տողին ծայրը սա՛ նշանը (-) կը դրուի, որ ենթամիայ կ'ըսուի:

### ՀՐԱՀԱՆԴ

18. Դրեցեք հետեւեալ խօսքերը՝ տողադարձի կանոնին համեմատ բառերուն վանկերը զիծով մը իւրամեկ զատկով:

Մաղիկները հաճելի են իրենց զոյնովն ու հոտվը: Ամէն անտառուն՝ պաշտպանուելու համար զէնք ունի. առիւեց՝ ժանիք, եղը՝ եղջիւր, մեղուն՝ խայթոց: Մարդիկ՝ զոյնի կողմանէ չսրս ցեղի կը բաժնուին. ճերմակ ցեղ, ու կամ խափշիկ ցեղ, դեղին ցեղ, պղնձազոյն ցեղ: Ասիս՝ երկրիս հինդ մասերու մէջէն ամէնէն բաղմամարդն է:

Օրինակ. Մա-դիկ-նե-րը հա-ճե-լի են:



### ԺԳ. Դաս.— Ուղղագրութիւն

27. Ուղղագրութիւն կը նշանակէ՝ բառերը անսխալ կամ ուղիղ գրել:

28. Ուղղագրութեան ամէնէն կարեւոր կանոնները հետեւեալներն են.

Ա.- Բառերը Ա. ձայնաւորով չեն վերջանար, այլ Յ մը կ'առնուն: Օրինակ. Հ'ըլլար գրել ընծա այլ պէտք է դրել՝ ընծայ: (Զարտուղիները յետոյ պիտի սորվինք):

29. Ե.— Ե ձայնաւորը բառին վերջը չի  
դրուիր:

ՀՐԱՀԱՆԴ

19. Գրեցել վարի խօսքերը՝ բառերուն սխալ ուղ-  
ղագրութիւնը շտկելով:

Եղբայրու քաղաք կ'երթաւ: Հայրդ քեզի ընծա  
պիտի առ: Կովը կը բառաչն: Ամէն մարդ առոր վը-  
րա պիտի հիտնա: Տղան արդէն ոաք ելեր կը քա-  
լի: Եթէ ինքը չզա՝ ես պիտի երթամ իրեն: Խարե-  
րա և անպիտան մարդը՝ պատուաւար մարդիկն իր-  
մէ կը հեռացնե:

Օրինակ. Եղբայրու յաղաք կ'երթայ:



ԺԴ. Դաս.— Ո եւ Ը ձայնաւորները

30. Ո.— Բառերը Ո ձայնաւորով չեն վեր-  
ջանար, այլ Յ մը կ'առնուն: Օրինակ. Զի  
գրուիր յարգա՝ այլ պիտի գրուի՝ յարգայ,  
սխալ է գրել նաւահածո, պէտք է գրել՝ նաւա-  
հածոյ:

31. Ը.— Ը ձայնաւորը՝ քանի մը բացա-  
ռութիւններէ զատ՝ բառերուն մէջ չի գրուիր:  
Օրինակ. ԶՇԼԱՐ գրել՝ խընձոր, այլ գրելու է  
խնձոր, պէտք չէ գրել՝ սիրցընել, այլ գրելու է  
սիրցնել:

ՀՐԱՀԱՆԴ

20. Օրինակեցել նետեւալ խօսքերը՝ անոնց  
մէջի բառերուն ուղղագրութիւնը շտկելով:

Երէկ ժամ մը գընդակ խաղացինք: Դշիս՝ թա-

գուշի ըսել է, իսկ արքա՝ թաղաւոր, Հօրեղբայրը  
համակալը բռոշմի զեղեցիկ հաւաքածո մը ունի, Հի-  
մայ գառըդ սորվէ՛ յետոյ ալ կը խաղաս, Գաղղիս  
յայրաքաղաքը, Պարիս է՛, Վաղը երեկո դըպրոցական  
շըքեղ հանդէս մը կայ, Լացըդ ե՛րբ պիտի դադրե-  
ցընես:

Օրինակ. Երկի ժամ մը զնդակ խաղացին:



ԺԵ. Դաս.— Անօւն կամ Գոյական

32. Անօւնը կամ Գոյականը բառ մըն է,  
որ անձ, անասուն կամ իր կը ցուցնէ: Օրինակ.  
Մայր (անձ), Նուն (անասուն). Ծառ (իր):

### ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

21. Գրեցկի վարի խօսերը եւ սուրագծեցկի  
անձ (մարդ) ցուցնող բառերը:

Մայրեկը կերտկուր կ'եփէ, եղբայրդ խանութը  
կ'աշխատի, Առաղձագործը աթոռ կը շինէ, Թագա-  
ւորը իր երկրին վրայ կ'իշխէ, Ոստիկանը քաղա-  
քին պահպանութիւն կ'ընէ, Ո՞վ է ձեր դպրոցին  
ուսուցիչը: Այս զինուորը քաջութեան նշան ստա-  
ցու է, Բայրս ու քեռեկինս վաղը պիտի մեկնին  
դէպ ի Վիեննա:

22. Բերանացի ըսէց քէ վարի բառերն ո՞ւը  
անձ, անասուն կամ իր կը ցուցնէ:

Իշխոն: նաւակ, եղ, տուն, կտառ, հաց, հայր,  
աղախին, առիւծ, կացին, փայտ, պապ, զամէշ,  
զիբք, վարդ, ճաղար, հացազոր, սեղան, մատ,  
այծ:

ԺԶ. Դաս.— Յատուկ Անուն

33. Անունի երկու տեսակ է. Յատուկ և Հասարակ:

34. Յատուկ անուն կ'ըսուին մարդու, անասունի և տեղւոյ մասնաւոր կերպով տրուած անունները: Օրինակ. Պողոս, Հռիփիսիմէ (մարդու անուն), Վարագ (շան անուն), Երեւան, Արագած, Տիգրիս (տեղւոյ անուն):

35. Յատուկ անունները միշտ դլխազրով կը գրուին:

Ը. Ընթեցուած.— Հայաստան

Հայաստան գեղեցիկ երկիր մ'է հարսւաս հանքերով ու արժէքաւար հնութիւններով: Ան . Փոքր Ասիոյ մէջ կը զանուի: Ունի շատ զետեր, որոնցմէ մեծագոյններն են. Եփրատ, Տիգրիս, Արագս կամ Երասիս. Մասիս և Արագած իր բարձրագոյն լեռներն են: Հայաստանի գեղեցկութիւններէն են նաև Վանայ, Ուրմիոյ և Սեւանայ ծովակները: Իր ներկայ մայրաքաղաքն է Երևան: իսկ զլխաւար քաղաքներն են. Լենինական, Էջմիածին, Սարտարապատ, Դիլիջան:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

23. Օրինակեցկի վերի ընթեցուածը և յատուկ անունները սուրագձեցկի:

24. Բերանացի ըսկի մարդու, յաղացի, երկրի, ծովու, և զետի յատուկ անուններ:



**ԺԵ. Դաս.— Հասարակ Անուն**

36. Հասարակ կ'ըսուին ա'յն անունները,  
որոնք միեւնոյն տեսակէն ամէն անձի, ամէն ա-  
նասունի և իրի կընան արուիլ: Օրինակ, Զի-  
նուոր, զիւդ, զես, ուուն:

**ՀՐԱՀԱՆԳՆԵՐ**

25. Օրինակեցէ՛ վարի հատուածը եւ գծերուն  
տեղ՝ յարմար հասարակ անուններ դրէ՛:

Հայաստան մեր — է: Ընկուզենին — մըն է:  
Սրկրազործը — կը զերկէ: Տունը մարդուն — է:  
Շուշանը զեղեցիկ — մըն է: Տարուան չորս եղանակ-  
ներն են —, —, —, —: Շաբաթը եօթը — սւնի:  
Մանեակը կնոջական — մըն է: Զին օպատկար — մըն  
է:

Օրինակ. Հայաստան մեր նայրենին է:


26. Բերանացի զեկի մկյ մկէ հասարակ անուն.  
Խաղի, ծաղկի, անառունի, զզեստի, կերակու-  
րի, պառւղի, երաժշական զործիքի, զէնքի, կահ-  
կարտսիքի, ծտորի, ամտնի, երկրազործական զոր-  
ծիքի.

Օրինակ. Գնդակ (խաղի անուն):



**ԺԵ. Դաս.— Գոյականին թիւը**

37. Գոյականին թիւը երկուք է. Եզակի և  
յօնակի:



38. Գոյական մը եզակի է՝ երբ մէկ հաս կը ցուցնէ: Օրինակ. Տօւն, լիակ. յօննակի է երբ մէկէ աւելի կը ցուցնէ: Ինչպէս Տներ, լիակներ:

39. Միավանկ (այսինքն՝ մէկ վանկ ունեցող) բառ մը յոքնակի կ'ըլլայ, երբ ծայրը Եւ աւելցնենք: Այսպէս. խոս՝ խոտեր, բոյն՝ բոյներ:

### Թ. Ընթեցուած. — Ստախոսին Պատիժը

Հովիւ աղայ մը կար, անունն էր՝ Միհրան: Օր մը ուզեց կասակ ընել իր ընկերներուն: Ու ըսկաւ ամբողջ ուժովը պոռալ. «Դայլ կայ, գայլ կայ, շուտով հասէք օդնութեան»: Ի՞նկերները վազելով շուտով հասան օդնութեան, բայց՝ ոչ զայլ զան, ոչ ալ զազան: Ակասակ էր, ըստ ստախոս աղան: Ուրիշ անզամ մըն ալ իբրական զայլեր եկան և այս անզամ ո՛քան պոռուց կտնչեց՝ ոչ ոք օդնութեան եկաւ: Ու զայլերէն պատառ պատառ եղաւ ստախոս Միհրան:

### ՀՐԱՀԱՆԴՆԵՐ

27. Օրինակեցէք այս ընթեցուածը եւ եզակի անուններուն (յատուկ կամ հասարակ) տակ զիծ շեցէցէք:

28. Յոյնակի ըրեկ բերանացի հնեւեւալ միավանկ բառերը.

Հաց, բահ, կով, ձի, զամ, բակ, փարչ, զես, լիճ, ծառ, խոզ, կին, մաս, աչք, մազ, լուծ:



**ԺԹ. Դաս.— Բազմավանկներուն յօննակին**

40. Բազմավ օնկ, այսինքն՝ շատ վանկ ունեցող  
բառ մը յոքնակի կ'ըլլայ, երբ ծայրը ներ ա-  
ւելցնենք: Օրինակ. Արսու աթուներ, Վառարան՝  
վառարաններ, տախտակամած՝ տախտակամած-  
ներ:

41. Անձայն չ ով վերջացող բառերը, երբ  
յոքնակի ընենք՝ չ գերը կը ջնջուի: Այսպէս,  
ծառայ՝ ծառաներ, արևայ՝ արևաներ:

**ՀՐԱՀԱՆԴՆԵՐ**

29. Օրինակեցի վարի խօսքերը և յովնակի ա-  
նուններուն տակ զիծ յաշեցի:

Շատ մը անառուններ խօսով կը կերակրուին:  
Առիւծը՝ անառուններուն թագաւորն է: Արեւուն  
տաքութիւնը՝ պտուղները կը հասունցնէ: Տիղրան  
Մեծ՝ Հայերուն թագաւորն էր: Փոթորիկը՝ ծոռերն  
արմտատէն կը հանէ: Տղայ մը՝ իր ծնողներուն ու  
դաստիարակներուն հնագանդելու է: Անմիտրանու-  
թիւնը՝ աղգեր կը կործանէ:

30. Բերանացի յովնակի ըրկի հետեւալ բազ-  
մավանկ բառերը:

Վաճառական, իշխան, թագուհի, վանդակ,  
ծաղիկ, տերիւ, մտատնի, կօշիկ, դութան, քառա-  
ժանի, մարզագետին, հաւաքածոյ,

Ի. Դաս.— Հոլով և Հոլովում

42. Հոլով.— Անունի մը վերջաւորութեան փոխուելուն՝ նոլով կ'ըսենք, որուն բայն է՝ նոլովիւլ՝ Օրինակ՝ բաժակ՝ բաժակի, ծով՝ ծովու։

43. Հոլօվները վեց հատ են. 1. Ուղղական, 2. Հայցական, 3. Սեռական, 4. Տրական, 5. Բաշառական, 6. Գործիական։

44. Հոլովում.— Հայերէն աշխարհաբարի մէջ բառերը չօրս կեւպօվ կրեան փոխուիլ. այսինքն՝ հոլովուիլ, որոնց նոլովում կ'ըսենք։ Օրինակ. Հաց՝ կ'ըլլայ հաց-ի, մարդ՝ մարդ-ու, զիեւ՝ գիշեր-ուան, նեղութիւն՝ նեղութ-եան։

45. Առաջին նոլովում.— Առաջին նոլովման եղակի սեռականը կ'ըլլայ -ի։ Օրինակ. ծառ՝ ծառի։

Եղակի	Ցաննակի
Աւղղակ. Հայց. ծառ.	ծառեր
Սեռ. Տրակ. ծառի	ծառերու
Բաշառ. ծառէ	ծառերէ
Գործիակ. ծառով	ծառերով

46. Անուններուն մեծ մասը Ա. Հոլովման պէս կը հոլովուի։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

31. Օրինակեցե՛ք վարի խօսեներ՝ հոլովուած բառերուն տակ զիծ բաշելով։

Փայտահատը՝ փայտի դէղի մը քով նստած էր. Թաղաղործ մարդը՝ գեղեցիկ պսակով կը պսակեն. Զորս ձայնով երգին քառամայն կ'ըսենք. Լու շտքարները՝ սիրուն տուփերու մէջ կը դնեն. Թըռչունները՝ բազէներով կ'որսացնեին։

32. Թերանացի հոլովեցկի հետեւալ բառերուն  
եղակին ու յովնակին.

Բակ, սեղան, որսորդ, ծակ, զաւաթ, սագ, զառ-  
նուկ:



### ԱԱ. Դաս.— Եւկրօդ Հօլովօւմ

47. Եւկրօդ հօլովման եղակի սեռականը  
Կ'ըլլայ՝ - ՈՒ: Օրինակ. Մօվ՝ ծովու .

Եղակի	Յօնակի
Ողջ. Հայց. ծով	ծովեր
Աեռ. Տրակ. ծովօւ	ծովերօւ
Բացառ. ծովէ	ծովերէ
Գործիակ. ծովօվ	ծովերօվ

48. Բ. Հօլովման տակ կ'երթան շատ մը  
(մեծ մասով միավանկ) բառեր:

### ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

33. Օրինակեցկի վարի խօսքերը եւ հոլովուած  
բառերուն տակ զիծ յաշեցկի

Սյս ըմբիշը՝ ձիու մը ոյժն ունի. Մարտ մար-  
դու օգտակար է. Այդ խօսքը՝ արեւու պէս պայծառ  
է. Մովու վրայ նաւով կը ճամբորդենք. Զլացող  
աղուն կաթ չեն տար: Հայերէնը՝ Հայուն լեզուն է.  
Արջու ձագին՝ թօժիւն կ'ըսեն: Իմաստուն առած  
է թէ. «Զուկը գլխէն կը հատիս: Կովու կաթը կը  
սիրես: թէ ոչխարի կաթը:

34. Բ. Հոլովման պէս հոլովեցէք վարի բառը:

Դար, գլուխ, էշ, աղայ, շահ, դի, արեւ, զաւ,  
Օրինակ. Դար՝ դարու, գլուխ՝ գլխու, էշ՝ իշու:



### ԻԲ. Դաս— ԵՐԵՎԱՆ ՀՕԼՈՎՈՒՄ

49. ԵՐԵՎԱՆ ՀՕԼՈՎՄԱՆ Եղակի ԱԵՌԱԿԱՆԸ  
Կ'ԵԼԼԱՅ - ՈՒԱՆ: ՕՐԻՆԱԿ. ՕՐ՝ ՕՐՈՒԱՆ:

Եղակի	Յօննակի
Ուզզ. Հայց. օր	օրեր
Սեռ. Տրակ. օրուան	օրերու
Բացառ. օրէ կամ օրուընէ օրերէ	
Գործիակ. օրով	օրերով
50. Գ. Հօլովման առակ կ'երթան ժամանակ ցուցնող անունները:	

### Ժ. Ընթերցօւած. — Զմեռը

Տարուան չորս եղանակներէն մէկն է ձմեռը:  
Հազիւ աշունը կ'անցնի՝ ձմեռուան ցրտութիւնը  
արդէն զգալի կ'ելլայ: Դեկտեմբեր ամսէն մինչեւ  
Մարտ կը աեւէ: Ձմեռուան գեղեցկութիւնը՝ իր  
սպիտակ ձիւնն է: Տղաք ձիւնէ գնդակ կը խազան,  
կը սահին և կամ չմուշկով կը չմշկեն սառուցին  
վրայ: Ձմեռ ժամանակ՝ գիշերները ցորենկներէն եր-  
կոր կ'ելլան:

## ՀՐԱՀԱՆՔՆԵՐ

35. Օրինակեցկի վերի ընթերցուածը եւ զիծ ժաշկեցկի Գ. Հորդվման տակ գացող (ժամանակ ցուցնող) անուններուն տակ:

36. Բերանացի հոլովեցկի յաջորդ բառերը Գ. Հորդվման պէս:

Շաբաթ, իրիկուն, գիշեր, անգամ, երեկ, վարչը, այսօք:



### ԻԳ. Դաս.— Զորորդ Հօլովում

51. Զորորդ Հօլովման եղակի սեռականը՝ Կ'ըլլայ՝ - ԵԱՆ (և - ԱՆ): Օրինակ. Տէրութիւն՝ Տէրութեան, ունի՝ տան:

Եղակի	Յօնակի
Ուղղ. Հայց. Տէրութիւն	Տէրութիւններ
Մեռ. Տրակ. Տէրութեան	Տէրութիւններու
Բացառ. Տէրութենէ	Տէրութիւններէ
Դործիակ. Տէրութեամբ	Տէրութիւններով

52. Դ. Հօլովման տակ կ'երթան՝ բոլոր ուրիւն վերջացող անունները և ուրիշ քանի մը զարտուղի բառեր, որոնց եղակի սեռականը՝ ԵԱՆ կամ - ԱՆ Կ'ըլլայ: Ինչպէս. Մնօւնի՝ ծննդեան, ունի՝ տան:

### ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

37. Օրինակեցեք վարի խօսքերը՝ Դ. Հողովման տակ գացող անունները ստորագծելով:

Մորդ՝ իր ծանրութեան համեմատ ոյժ ունենալու է: Փողոցին մէջ աղաք բարսւթենէ աւելի՝ չարսւթիւն կը սորզին: Սպիտակ ցեղը՝ մաքի ուշիւթեամբ սեւամորթ ցեղը կը զերազանցէ: Քրիստոսի ծննդեան տօնը՝ մեծագոյն տօներէն մէկն է: Համեստութիւնն է աղջկան մը զարդը: Զիւնը՝ նախլերան զազաթը կ'իջնայ:

38. Դ. Հողովման պէս հողովեցեք հետեւեալ բառերը:

Զօրսւթիւն, բարձրութիւն, ժողովուրդ, կործանում, տուն, լեռ, ձուկ, շուն:



Ի՞՞ Դաս. — Զարտուղի Հոլովումներ

53. Բնդհանուր կանոնէն տարեց կերպով կը հողովուին հետեւեալ զարտուղիները.

54. Ի վերջացող բառերը. Հօգի՝ նոգւոյ, զինի՝ զինւոյ:

55. Ազգականութիւն ցուցնող բառերը. Մայր՝ մօր, եօյ՝ երջ եւն:

56. Աստօւած՝ կ'ըլլայ Աստօւծոյ, կայսոր՝ կայսեր, սէր՝ սիրոջ, սէր՝ սիրոյ եւն:

## ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

39. Օրինակների վարի խօսքերն ու ստրագների զարտուղի կերպով նորովուած բառերը:

Որդւոյ մը պարաքն է՝ իր ձնողքին հնազանդիլ, Ամէնէն մեծ յաղթութիւնը՝ թշնամւոյն ներելն է: Խնչո՞վ կրնայ փոխարինուիլ հօր ու յօր սէրը: Զիթենւոյ ճիւղը՝ խազաղութեան խորհրդանիշ է: Ամրող աիեղերքը՝ Սառաւծոյ ձեռագործն է: Տիրոջ ակնարկը՝ ծառային հրամանն է:

40. Բերանացի րսկի յաշորդ բառերուն եզակի սկզբանը.

Դասի, եկեղեցի, զիւղացի, գարի, տարի, եղայր, հօրաքոյր, կրտաքոյր, կին, լոյս, անկազին:



### ԻԵ ԴԱՍ. — Յօդ

57. Յօդ կ'ըսուի այն գիրը կամ մասնիկը, որ անունի մը վերջը գրուելով՝ զայն կ'որոշէ: Օրինակ. Անորոշ է, երբ ըսեմ՝ Յօւն, Խաղամ. բայց որոշ կ'ըլլայ, երբ ըսեմ՝ տունը, քաղաքը:

58. Յօդը երկու տեսակէ: Ուստիչ և անօրու:

59. Ուստիչ յօդ. — Ուստիչ յօդ կը կոչուին և և ն գրերը:

60. Ը կը գրուի բաղաձայն գրով վերջացած բառերուն ծայրը: Օրինակ. Մատիս՝ մասիսը, բակ՝ բակը, օսին՝ շունը:

61. Ն կը գրուի ձայնաւոր գրով և անձայն

յ-ով վերջացած բառերուն ծայրը: Օրինակ.  
Զի՞ ձին, մողօւ՝ մեղուն, ծառայ՝ ծառան:

### ԺԱ. Ընթերցուած. — Հացը

Դիտէ՞ք, ազաք, թէ ո՛քափ աշխատանք պէտք  
է, մինչեւ որ մեր կերած հացը պատրաստուի: Նախ  
մշտկը սերմը կը տանէ, արտը կը հերկէ ու կը առ-  
փանէ, Երբ ցորենը բարձրանայ՝ քանի մանգամ կը  
ջրէ զայն Իսկ երբ հասուննայ՝ դերանդիով կամ  
մանգաղով կը չնձէ ու սայլերսվ տուն կը կրէ: Յե-  
տոյ հաւաքուած օրանը կը կամնէ, ցորենը պարկե-  
րով շաղացք կը տանի, ազալ կու տայ և ալիւր  
կ'ըլլայ: Տան տիկինն այ ալիւրը շաղուած՝ փուռը  
կու տայ, ուր կ'եփի և հաց կ'ըլլայ:

### ՀՐԱՀԱՆԴ

41. Գրեցկի վերի ընթերցուածը և սուրա-  
գծեցկի որոշիչ յօդերը:



19. Դաս. - Անօրու յօդ

62. Անօրու յօդն է մը:

63. Մը կը դրուի ամէն անորոշ գոյականէ  
վերջ՝ դայն մասամբ մը որոշելու համար: Օրի-  
նակ. Տօւն՝ տուն մը, գիր՝ գիրք մը:

### ՀՐԱՀԱՆԴՆԵՐ

42. Օրինակեցկի վարի խօսերը և անորոշ  
յօդերն սուրագծեցկի:

Ծառէն տերեւ մը փրցուցիւ Այս գանձը՝ արտի  
մը մէջէն զանուեցաւ Այդ ալ բարիք մըն է Այս-  
պիսի խաղաղէ մը՝ լաւ զինի չնւլիք Այն խեղճ աղ-  
քառար անզամ մը տեսա՞ր Յաղթական զինուորը՝ ար-  
ժանի է պատուանշանի Աշակերտի մը նիշերը՝ իր  
աշխատանքին արդիւնքն են.

43. Հետեւեալ խօսքերուն մէջ կետերուն ուղ՝  
անորոշ յօդ դրէք քերանացիւ

Մեր դասարանին մէջ անյրցելի աշակերտ . . .  
կայ Ինծի հասցէ . . . առւր Դուն դեռ ազայ . . .  
ես Աշխէն բարի աղջիկ . . . է Հայրիկը Սոնա-  
յին դլխարկ . . . զնեց Զեր առւնը հիւր . . .  
եկաւ Հրայր, դրադարանէն զիրք . . . բեր Մօր-  
յէդ լուր . . . առէ՞ր :



1է. Դաս.— Ածական ~ Ուակական ա-  
ծական

64. Ածական.— Ածականը բառ մըն է, որ  
գոյականէն առաջ կը գրուի և անոր մէկ յաւ-  
կութիւնը կամ անոր ի՞նչպէս ըլլալը կը ցու-  
ցնէ: Օրինակ Հասուն պառազ, կարմիր խն՛որ,  
բարի զաւակ:

65. Ածականը ո՛չ թիւ, ո՛չ ալ հոլով ու-  
նի. յօդ չ'առնուր և անփոփոխ կը մնայ: Այս-  
պէս Մեծ տուն, սիրուն զգեստը, ոււիմ տղաք:

66. Ածականները հինգ տեսակ են. Ուա-  
կական, Ցուցական, Ստացական, Թուական,  
Անօրու:

67. Արակական ածական . . . Արակական  
ածականը անունի յը ի՞նչպէս ըլլալը կը ցու-  
ցնէ և ի՞նչպէս հարցումով կը դուռուի: Օրի-  
նակ. Գեղեցիկ զարդ. ի՞նչպէս զարդ - զեղե-  
ցիկ:

### ՀՐԱՀԱՆԴՆԵՐ

44. Օրինակեցի հնեւեւալ խօսիքը եւ որակա-  
կան ածականներն ստորագծեցի:

Քաջ տշտկերաբ՝ կը վարձատրուի: Անկեղծ բա-  
րեկամը՝ կը փնտռուի: Գէր անտունը մարթելու  
համար է: Սուր դանակը՝ լաւ կը կարէ: Սեւ գոյնը՝  
հաճելի չէ: Ճերմակ շաւշանը՝ յաքրութեան օրինակ  
է: Լաւ հունձք կու տայ՝ միայն պարարտ հողը:  
Կաչաղակը՝ շատախօս թռչուն մըն է: Սոխակը հիա-  
նալի ձայն ունի:

45. Վարի բառերուն զոյնը ցուցնող յարմար  
ածական գտէի եւ խօսի մը շինկեցի:

Թանաք, կաւիճ, գրատախակ, թուղթ, քա-  
րածուխ, խոտ, երկինք, ծով, նարինջ, սոկի, ար-  
ծոթ, տերեւ, կիր, կաթ:

Օրինակ. Կարմիր բանայով կը գրեմ:



ԽԸ. Դաս. — ՑՈՒցԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

68. ՑՈՒցԱԿԱՆ ԱԾԱԿԱՆԻԵՐ ցոյց կու-  
տան ա'յն անունները, որոնց վրայ կը խօսուի:

69. Ցուցական ածականներն են. Այս, այդ, այն: Այս կը գործածուի մեղի ամէնէն մօտ առարկայի, այդ՝ քիչ մը հեռու. և այն՝ ամէնէն հեռու եղողին համար:

70. Ցուցական ածականնեն ետքն եկող դոյականը՝ Ն կամ Ը յօդը կ'աււու: Օրինակ. Այս գրիշը, այդ մեղուն, այն տունը:

### ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

46. Օրինակեցկի յաջորդ խօսքերը եւ ցուցական ածականներուն բակ զիծ յաշեցկի:

Այն աշակերար, որ դասը չի սորվիր, կը պատժուի: Այս սենեակը վարձու կու տանք: Այդ զիրքը քանիիք գնեցիք: Այս գրիչը դպրացական յիշատակ է: Այն ծառը, որ պատղ չի տար՝ կը կը-պրուի ու կրակ կը նետուի: Այդ ծառը խնձորենի, իսկ այս՝ շաղանակենի է: Այն տունը աղքաններուն չամար բաց է:

47. Ցուցական ածական դրկի թերանացի վարի լիտերուն են դր:

• • • Նոր զլխարկը: • • • բարձր աշտարակը:  
 • • • փոքրիկ կատուն: • • • շունը խածած է: • • •  
 շրջանակը սոկեզօծ է: • • • ծառան հաւասարիմ է:  
 • • • խաղաղը ո՞րքան անոյշ է: • • • մարդիկը  
 ո՞ր երկրէն կու դան:



Իթ. Դաս. — Ստացական Ածական

71. Ստացական ածականները գոյականի մը  
որուն ըլլալը կը ցուցնեն:

72. Ստացական ածականներն են.

Եզակի

Յօհնակի

Իմ, Տօւ, իւր  
(իր, անոր)

Մեր, ձեր, իրենց  
(անօնց)

73. Իմ, Տօւ, իւր ստացական ածականներուն վերաբերող գոյականները՝ ո, զ, ն կամ ը գրերը կ'առնուն իրենց վերջը, որ դիմացոյ յօդ կ'ըսուին. Խակ մեր, ձեր, իրենցի վերաբերողները՝ ն կամ ը կ'առնուն: Օրինակ. իմ ձեռքս, Տօւ մազգ, իւր (անոր) դէմքը. մեր, ձեր, իրենց (անօնց) դլխարկը:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

48. Օրինակների հնէնւեալ խօսքները եւ ստացական ածականներն ստորագծեցեք:

Իմ հագուստս նոր է: Տօւ տնօրակդ պատռածէ: Իւր ազգականները հարսւստ են: Մեր դաստրանը վերի յարկին մէջն է: Ձեր հայրը երէկ քաղաք վերադարձաւ: Իրենց աղան գաղրացին մէջ առաջինն է: Իմ զրիչներս ու քու մտախաներդ մեր դաստրանը մնացին: Ձեր քայրերը իմ ծնողքին հետ պատյանի գացին: Իրենց խանութն է ասիկա:

49. Յարմատ ստացական ածական դրեք քերանցի վարի կետերուն տեղ:

Ամբատ . . . եղբայրո է, Անոնք . . . դրգերդ  
են, Փառանձնեմ . . . քոյրն է, Այս բարձր շէնքը  
. . . վարժարանն է, Երեկ կ'ըսէիք թէ ասոնք . . .  
բարեկամներն են, Ուր է . . . կարկինս և ուր են  
. . . պայտահակները:



## Լ. Դաս.— Թօւական Ածական

74. Թօւական ածականները անուան հանի՛ նաս, կամ հաներող և կամ հանիական ըլլալը կը ցուցնեն: Օրինակ. Մէկ սեղան, տասը զնդակ, երկրող դասարան, ճինջական ընկոյզ:

## ԺԲ. Ընթերցուած.— Երկու ընկերներ

Տիգրան և Վահան երկու դասընկեր էին: Առաջին անգամ զիրաք ճանչցան դպրոցամուտին օրը՝ Տիգրան ութը ատրեկան, իսկ Վահան ինը ատրեկան էր. Ունէին երեքական եղբայր և առողջ ու կայտառ էին: Դժբախտ դէպք մը պատճառ եղաւ որ այս երկու ընկերներն՝ ըլլան երկու սրտագին բարիկամներ: Ահա թէ ի՞նչպէս: Օր մը՝ խաղալու ժամանակ՝ Վահան բարձր աեղէ մը վար ինկաւ ու մէկ սրունքը կոտրեց: Երեք ամիս ստիպուեցաւ հիւանդանոց պառկիլ ու դարմանուիլ: Այս միջոցին՝ իր ընկերը Տիգրան, օրը երկու անգամ այցելութեան կ'երթար ու առած դասերը անոր կը պատմէր, որով իր դասերէն ետ չէր մնար Վահան: Զորրորդ ամսուան սկիզբը, երբ Վահան առողջացած հիւանդա-

դանոցէն տուն վերադարձաւ՝ իր առաջին գործն եղաւ այցելութիւն մը տալ իր սիրելի ընկերոջ և բարեկամին՝ Տիգրանի և որտանց շնորհակալ ըլլաւ անոր.

50. Օրինակեցէք վերի ընթեցուածը եւ րուական ածականներուն տակ զիծ բաշեցէք:

51. Վարի խօսիերուն մէջ կէտերուն տեղ րուական ածական դրէք:

Եղբայրս . . . տարեկան ու քոյրս . . . տարեկան է։ Շաբաթը . . . օր ունի Առառու ժամը . . . ին դասերը կը սկսինք ու իրիկուն . . . ին կ'աւարաենք։ Մէկ օրը . . . ժամ ունի. իսկ մէկ ժամը . . . վայրկեան։ Մեր վարժարանին . . . կարգին մէջ վկայական կու տան։ Հայրս մեղի . . . նուէր տուաւ։ Տան . . . յարկէն վար ինկաւ.

### ԱԱ. Դաս. — Անօրու Ածական

75. Անօրու ածականները անորոշ իմաստ մը կու տան անունին։ Օրինակ. Ա.մէն աղայ, ուրիշ տուն, բանի մի գիրք։

76. Անօրու ածականներն են. Ամէն, բոլոր, ամէն մէկ, ուրիշ, միւս, միեւնոյն, բանի մը, այսչափ, այզչափ, այնչափ, բանի, ո՛ր, ի՞նչ, եւայլն։

## ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

**52.** Օրինակեցկե հետեւեալ խօսքերը եւ անորոշ ածականներն սուրազնեցկե:

Բոլոր մարդիկ իրարու եղբայր են, թող ամէն աշակերտ ջանայ առաջինն ըլլալ։ Միւս ընկերդ ուր է։ Միեւնոյն տաւնը կը բնակիք։ Քանի մը ապրիչն ուսումդ կ'աւարտես։ Այդչափ դրամով ի՞նչ բան գննեցիք։ Քանի ընկեր ունիս։ Ո՞ր փողոցը կը բնակիք։ Ուրիշ բան է զիտուն՝ ըլլալը։ Ի՞նչ զիրք կը կարգան։

**53.** Մեյմեկ խօսք շինեցկե յաջորդ անորոշ ածականներով։

Խւրտքանչիւր, այսինչ, միւնոյն, մէկալ, այդպիսի, այդչափ, բալոր, քանի՛ քանի՛։

Օրինակ. Մեկալ զիրքը կուզեմ։



**ԼԲ.** Դաս. Դերանուն. — Անձնական դերանուն.

**77.** Դերանուն. — Դերանունը բառ մընէ, «ը անուան տեղը կը գրուի՝ զայն չկրկնելու համար»։ Օրինակ. Մուսեղ՝ հայ զօրավար է։ Ան շատ պատերազմներ ըրած է։ Ան գրուած է Մուսեղին տեղը։

**78.** Դերանունը թիւ, նսլով և գէմի ունի։

**79.** Դէմքը երեք է. առաջին, երկրորդ, երրորդ։

**80.** Անձնական դերանուն. — Անձնական

դերանունները զործողութիւն կատարող անձը  
կը ցուցնեն եւ հետեւեալներն են.

Նզակի	Յօննակի
Առաջին դէմք Ես	Մենի
Երկրորդ դէմք Դուն	Դուք
Երրորդ դէմք Ինքը, ան	Իրենի, անօնի

### ԺԳ. Ընթեցուած Վանառականն ու նաւապետը

«Դուն Հայր Աւնի՛ս. Հարցուց օր մը վաճառա-  
կանը նաւապետին՝ Ամի՞չ, ես Հայր Հունիմը, պա-  
տասխանեց նաւապետը: Հայրս ու պապս ծովու մէջ  
խեղգունցանու: Աւելին դուն ալ ծովու մէջ պիտի  
մեռնիս, ծովէն չե՞ս վախնարը, յարեց վաճառա-  
կանը միամտութեամբ: Բայց խնդրեմ, դուք ալ  
կրնայի՞ք ինծի ըսեւլ թէ ձեր Հայրը ի՞նչպէս վախ-  
ճանած էս, Հարցուց նաւապետը: «Հայրս մեռած է  
իր անկողնոյն մէջը, պատասխանեց վաճառականը,  
«Ետա լու, աւելին դուք ալ անկողնոյ մէջ պիտի  
մեռնիք, անկողնէն չէ՞ք վախնարը. Հարցուց նա-  
ւապետը ժպանելով ու առանց պատասխանի սպասե-  
լու մեկնեցաւ գնաց:

### ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

54. Օրինակեցէք վերի ընթեցուածը եւ անձ-  
նական դերանուններն սուրագծեցէք:

55. Բերանացի ըսէք թէ վարի անձնական դե-  
րանունները յաներո՞րդ անձ կը ցուցնեն:

Ես կը գրեմ: Դուն կը խաղաս: Մենի կ'աշխա-  
տինք: Ան կ'ուտի: Դուք կը քնանաք: Իրենի կը

կարդան։ Դուն կու լաս։ Դուից կը հերկէք։ Ա-  
նոնց կը կամնեն։ Խնիլը բերաւ։



### ԼԳ. Դաս. — Ցուցական Դերանուն

81. Ցուցական դերանունները ցոյց կու  
ասն ա՛յն անունները, որոնց վրայ կը խօսուի և  
հետեւեալներն են։

Եզակի	Յօնակի
-------	--------

Ա. գէմք Սա, աս, ասիկա	Ասոնի
Բ. գէմք Աս, ատիկա (դա)	Ատօնի
Գ. գէմք Նա, ան, անիկա	Անօնի

82. Ան, անիկա և անօնի անձնական դե-  
րանունի տեղ ալ կը դործածուին։

### ԺԴ. Ընթեցուած. — Անձնասէր տղան

Սերոք անձնասէր տղայ մըն էր։ Ան միշտ իր  
վրայ կը մասածէր ու ամէն բան իրեն համար կ'ու-  
զէր։ Թէեւ մայրը յաճախ զանիկա կը խրատէր,  
սակայն ան բնաւ ինքզինքը չէր ուղղեր։ Ան ի՞նչ  
է։ Սերո՛քօ, հարցուց օր մը մայրիկը, օշաքարները  
քեզի և եղբայրներուդ համար զնած եմ։ ինչո՞ւ  
դուն առանձին կ'ուտես։ Ասոնք միտյն քեզի՝ համար  
ենց։ Ամօթէն կարմքեցաւ Սերոք ու կտմացուկ մը  
շաքարները սեղանին վրայ դրաւ։ Այն տաեն մայրը  
նորէն շաքարները Սերոքին յանձնեց՝ խրատելով որ  
անձնասէր չըլլայ, ուրիշներն ալ իր անձին պէս

սիրէ: Ու վերջապէս՝ ոԱ՛ռ հրժայք, ըստու, աստանք  
ու առ' թ եղբայրներուդ զետ միասին կերծ:

### ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

55. Օրինակեցկի վերի ընթերցուածը՝ ցուցա-  
կան դերանուններն ստորագծելով:

57. Բերանացի ըսկի թէ յաներո՞րդ դկմի եւ  
ի՞նչ թիւ են վարի ցուցական դերանունները:

Աս գնդասեղ է: Ասիկա ճախարակ է: Ասոնի  
գերմանացի ենու Անիկա բժիշկ է: Ասոնի Հայտասա-  
նէն եկած ենու Աս քանի՛ կ'արժէ: Ան ուշիմ աղջիկ  
է: Մա Այվազովսկի նկարն է: Նա աղնիւ մարդ  
մըն է:



### Լ.Դ. Դաս.— Ստացական Դերանուն

83. Ստացական դերանունները անունի մը  
որո՞ւն ըլլալը կը ցուցնեն և անոր տեղը կը  
դրուին:

84. Ստացական դերանուններն են.

Եզակի

Յօննակի

Ա. դէմք Իմա

Մերը

Բ. դէմք Քօւկդ

Զերը

Գ. դէմք Խրենը, իւրը (անորը) Խրենցը (անոնցը)

## ԺԵ. Ընթեցուած. — Գայլն ու գառնուկը

Դառնուկ մը ծարաւցած՝ հօտէն բաժնուեցաւ ու զնաց առուակէն ջուր խմելու։ Յանկարծ անտառէն գայլ մը դուրս ելաւ ու մօտենալով գառնուկին՝ սասանց. ոԱյս ջուրը իմս է, ինչտ' կը խմեսա։ Դառնուկը պատասխաննեց. «Եթէ քուկդ է, թա՞ղ որ խմեմ ու շնորհակալ ըլլայ քեզիս։ Ո՛չ պիտի չխմես այս ջրէն։ ասիկա ձերը չէն։ ըստ զայլը կոշտութեամբ։ ո՛Իիսեմ որ մերը չէն։ պատասխաննեց զառնուկը հեղութեամբ, որայց չէի գիտեր թէ զայլերն իրենցը կը համարին Ասաւեծոյ առւած այս ջուրը։ ուռէ՛, հիմայ կառը կառը կ'ընեմ զքեզ։ պոռաց զայլը բարկութեամբ, երբ յանկարծ . . . շլախկ զետին առպալեցաւ չար գաղանը հովուին հրացանի գնդակէն։

## ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

58. Օրինակեցի վերի ընթեցուածը եւ ստական դերանուններն սուրազնեցի։

59. Բերանացի մկյակ խօսի շինեցի հետեւաշ ստացական դերանուններով.

Իմս, մերը, իրենցը, քուկդ, իրենը, ձերը, իւրը։

Օրինակ. Թու մազդ շկկ կ, իմս սեւ կ:



## ԼԵ. Դաս. — Յարաբեական Դերանուն

85. Յարաբեական դերանունը ՈՐ բառն է և կը դրուի իրմէ առաջ եղած անուան տեղը։

86. Յարաբեական դերանունը ունի թիւ ու նօլով, բայց դեմք չունի։

87. Յարաբերական դերանունը հետեւեալ  
կերպով կը հոլովուի.

Եզակի	Յօնակի
Ուղղ. Որ	Որոնք
Հայց. Զօր	Զօրոնք
Մեռ. Տրակ. Որուն	Որոնց
Բացառ. Որմէ	Որոնցմէ
Գործիակ. Որով	Որոնցմօվ

### ՀՐԱՀԱՆԴԻՆԵՐ

60. Օրինակեցկի հետևեալ խօսքերը եւ յարաբերական դերանուններն սուրագեցեցի:

Այն ծառը, որ պառւղ չի տար, պէտք է կարել ու վառել, Այդ որդը, որ ճիմայ կը զեռայ, օր մը թիթեռ պիտի ըլլայ ու թռչի. Այն յարդիկ՝ որոնք եւրիշին բարիք ըրած են, իրենք ալ բարիք պիտի դանեն: Ի՞նչ է այն բանը, որուն ահնքը նախ կը արամեցնէ՝ յեռոյ ալ կ'ուրախացնէ: Տղայ մը, որմէ իր ծնողքն ու դաստիարակները դու չեն՝ երբեք սրառվ ուրուխ չի կրնար ըլլալ: Մի՛ արհամարհեր բան մը, զօր յեռոյ պիտի ստիպուիս յարդել: Այն դրգերը՝ որոնցմէ օգուտ մը պիտի չքաղես՝ մի՛ կարդար:

61. Կէտերուն տեղ՝ յարաբերական դերանուն դրկի բնրանացի վարի խօսքերուն մէջ:

Այդ նամակը՝ . . . կարդացիր, հայրդ զրած է: Այս խնձորենին՝ . . . պառւղէն կերտը՝ ես անկած եմ: Այն զրիչը՝ . . . կը գրէ Յակոբ, նուէր ստացեր է: Այդ մեծ անասունը՝ . . . կը վախնա՞ փիղ կը կոչուի: Ասոնք՝ . . . զրայ կը զարմանա, Հոսմէն բերուած են: Այդ բանը՝ . . . ա՛յնքան

Կը զդուշանառ, քեզի չտիտղանց հարկաւոր է:



## I. Գառականություններ

88. Անօրության գերանունները անորոշ անուններու տեղը կը դրուին և անորոշ գաղափար մը կը յայտնեն: Օրինակ՝ Առաջերտերուն զաս հարցուցի՝ ոչ մէկը զասը գիտշաւ: Թեզի զիրք մը տուած էի, միեւնոյնը այսօր ես ուրիշն ստացայ:

89. Անօրության գերանունները անորոշ ածականներուն վրայ յօդ դնելով կը կազմուին և հետեւեւալներն են.

Մէկը, ամէնիք, բալարը, ոմանի, ամէն մէկը, ոչ մէկը. ոչ ա՛, ուրիօը, միւսը, մէկալը, միեւնոյնը, ո՞րը, ո՞վ, ո՞շխօփիը, ի՞նչը, ևայլն:

## ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

62. Գրեցէք վարի խօսքերը եւ անորոշ դերանուններուն տակ գիծ յաշեցէք:

Երեք եղբայր ունէի, մէկը մեռաւ, թանի՛ հոգի գլխարկ չունի. — ամէնքը: Թառն հոգի պառյափ զացեր էին, ոմանք շոգեկառքավ, ոմանք ալ քալելով: Բարեգործ մարդ մը աղքատներուն հաց բաժնեց: որոնցմէ ամէն մէկը տասնական ստացաւ: Զեղմէ ոչ մէկը պիտի բացակայի վաղուան հանդէսին:

Մարդիկ միշտ ուրիշը յանցաւոր կը նկատեն։ Այս  
մատանիները կը տեսնե՞ն. բոլորն ալ ոսկի են, իսկ  
ոմանք նոյնիսկ թանկաղին քարերով զարդարուած։  
արդ, ո՞րը կ'ուզես։


63. Քերանացի ըսկե րե հետեւեալ խօսքերուն  
մէջ ի՞նչ տեսակ դերանուն կայ։

Դասընկերներուդ մէջ դուն միշտ առաջինը  
եղիր։ Երկուքս ալ ժամացոյց ունինք. օտակայն իմս  
արծաթէ է, իսկ քուկդ ոսկիէ։ Ասիկա կը խստա-  
նայ բնուած սուտ չխօսիլ։ Այս հին դրամներէն ո՞րը  
ամէնէն յարգին է։ Ե՞րբ կը հաճիք մեզի այցե-  
լութեան զար Դժբախտաբար մենք պիտի չկարե-  
նանք զար եթէ կը հաճիք, զուք մեզի հրամմեցէք։

ՎԵՐՋ



**ՆԻԹԵՐՈՒ ՅԱԿ**





- 3-4 Յառաջաբանի տեղ  
5 Ա. Դաս՝ Հայերէն քերականութիւն  
5-6 Բ. Դաս՝ Գիր  
6-7 Գ. Դաս՝ Վանկ  
7 Դ. Դաս՝ Բառ. և խոռք  
8 Ե. Դաս՝ Առողանութիւն-երկար  
8-9 Զ. Դաս՝ Առողանութիւն-պարոյլ  
9 Է. Դաս՝ Առողանութիւն-պարոյլ  
9-10 Ը. Դաս՝ Ե ձայնաւորը  
10 Թ. Դաս՝ Ո ձայնաւորը  
11 Ժ. Դաս՝ ՈՒ-ի հնչումը  
11-12 ՃԱ. Դաս՝ Ց գիրը  
12-13 ՃԲ. Դաս՝ Տողադարձ  
13-14 ՃԳ. Դաս՝ Ուզզագրութիւն  
14-15 ՃԴ. Դաս՝ Ո և Ը ձայնաւորները  
15 ՃԵ. Դաս՝ Անուն կամ Գոյական  
16 ՃԶ. Դաս՝ Յատուկ Անուն  
17 ՃԷ. Դաս՝ Հասարակ Անուն  
17-18 ՃԸ. Դաս՝ Գոյականին թիւը  
19 ՃԹ. Դաս՝ Բազմավանկներուն յոքնակին  
20 Ի. Դաս՝ Հոլով և Հոլովում - Ա. Հոլովում  
21-22 ԻԱ. Դաս՝ Երկրորդ Հոլովում  
22-23 ԻԲ. Դաս՝ Երրորդ Հոլովում  
23-24 ԻԳ. Դաս՝ Զորրորդ Հոլովում  
24-25 ԻԴ. Դաս՝ Զարտուղի Հոլովում  
25-26 ԻԵ. Դաս՝ Յօդ  
26-27 ԻԶ. Դաս՝ Անորոշ յօդ  
27-28 ԻԷ. Դաս՝ Ածական - Որակական Ածական  
28-29 ԻԸ. Դաս՝ Ցուցական Ածական

- 30 իթ. Դաս՝ Ստացական Ածական  
 31-32 լ. Դաս՝ Թուական Ածական  
 32-33 լ.լ. Դաս՝ Անորոշ Ածական  
 33-34 լ.լ. Դաս՝ Դերանուն - Անձնական Դերա-  
     նուն  
 35-36 լ.դ. Դաս՝ Ցուցական Դերանուն  
 36-37 լ.դ. Դաս՝ Ստացական Դերանուն  
 37-38 լ.ե. Դաս՝ Ցարաբերական Դերանուն  
 39-40 լ.զ. Դաս՝ Անորոշ Դերանուն



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0013059

ЦЕНА

15

13103